ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 21-22-Ի ՀԵՐԹԱԿԱՆ (ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ) ՆԻՍՏԻ

ք. Երևան **«22» հուլիսի 2021թ.**

Հիմք ընդունելով ՀՀ կրթության տեսչական մարմնի (այսուհետ՝ տեսչական մարմին) կառավարման խորհրդի աշխատակարգի 18-րդ և 19-րդ կետերը, և հաշվի առնելով տեսչական մարմնում առկա հրատապ լուծում պահանջող հարցերը՝ տեսչական մարմնի կառավարման խորհրդի (այսուհետ՝ Կառավարման խորհուրդ) հերթական նիստը որոշվեց անցկացնել հեռակա քվեարկությամբ:

Կառավարման խորհրդի հեռակա քվեարկությունը սկսվեց 2021 թվականի հուլիսի 21-ին և ավարտվեց 2021 թվականի հուլիսի 22-ին՝ ժամը 18⁰⁰-ին:

Քվեարկությանը մասնակցել են՝

Կառավարման խորհրդի նախագահ՝

Վ. Դումանյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի պաշտոնակատար

Կառավարման խորհրդի անդամներ՝

Ա. Ասոյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի դեկավար

Ա. Ավանեսյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Ք. Գրիգորյան - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Ա. Հայրապետյան - ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

Ս. Ալոյան - «Դասարան» կրթական ծրագրի հիմնադիր նախագահ

Ա. Բախչյան - «Հանրային դիվանագիտություն» հասարակական կազմակերպության նախագահի կրթության հարցերով խորհրդական

Ա. Հակոբյան - «Դասավանդիր, Հայաստան» կրթական հիմնադրամի արտաքին կապերի գծով տնօրեն»

Բացակա էր՝

Բ. Փափազյան - «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի խորհրդի անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

1.ՀՀ կրթության տեսչական մարմնի 2022 թվականի բյուջեի հայտի նախագծի ներկայացում:

2 ՀՀ կրթության տեսչական մարմնի 2021 թվականի ստուգումների տարեկան ծրագրում լրացում կատարելու վերաբերյալ:

Քվեարկության համապատասխան նյութերը ուղարկվել են կառավարման խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին: Քվեարկությունը կայացել է:

Քվեարկության արդյունքում՝

1. Վ. Դումանյանը 1-ին և 2-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
2. Ա. Ասոյանը 1-ին և 2-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
3. Ա. Ավանեսյանը 1-ին և 2-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
4. Գ. Գրիգորյանը 1-ին և 2-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
5. Ա. Հայրապետյանը 1-ին հարցին քվեարկել է «դեմ», իսկ 2-րդ հարցին քվեարկել է «կողմ»:
6. Ս. Ալոյանը 1-ին և 2-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
7. Ա. Բախչյանը 1-ին և 2-րդ հարցերին քվեարկել է «կողմ»:
8. Ա. Հակոբյան 1-ին և 2-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,

Քվեարկության արդյունքները՝

Հարց 1-ին՝ 7 «կողմ» 1 «դեմ»:

Հարց 2-րդ՝ 8 «կողմ»:

Այսպիսով, տեսչական մարմնի Կառավարման խորհրդի հեռակա նիստին մասնակցած խորհրդի 8 անդամներից 7-ը օրակարգի բոլոր 2 հարցերին քվեարկել են «կողմ»:

Ա. Բախչյանն օրակարգի 1-ին հարցի հետ կապված նշել է, որ 2022թ բյուջեում պարոն Շագաֆյանի առաջարկած փոփոխությունը հիմնավորված է և ՀՀ կառավարությունն այն անպայման պետք է ընդունի:

Ա. Հայրապետյանը օրակարգի 1-ին հարցին քվեարկել է «դեմ»: Ի պատասխան խորհրդի անդամներին ուղղված՝ **Ա. Շագաֆյանի** գրությանը՝ «ՀՀ կրթության տեսչական մարմնի 2022 թվականի բյուջեում կատարված փոփոխությունների մասին» **Ա. Հայրապետյանը** արձագանքել է , որ հայտով տնտեսագիտական դասակարգման «Այլ ծախսեր» հոդվածով ներկայացվել է 5 580 0 հազար դրամ հետևյալ հիմնավորմամբ՝ Կրթության որակի ապահովմանն ուղղված կանոնադրական նպատակի իրականացման համար 2022 թվականին նախատեսվել է վերահսկողական գործառույթների ընթացքում դասալսումներ իրականացնել հանրակրթական 20 ուսումնական հաստատություններում, ինչի համար անհրաժեշտ կլինի յուրաքանչյուրում 3-ական մասնագետի մասնակցություն՝ յուրաքանչյուրին նվազագույն աշխատավարձի չափով վճարմամբ (20*3*93000դ=5580.0 հազ դրամ): Գումարը չի նախատեսվել իրավական հիմքի բացակայության պատճառով:

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո Կառավարման խորհուրդը որոշեց.

Հարց 1. Հավանություն տալ ՀՀ կրթության տեսչական մարմնի 2022 թվականի բյուջեի հայտի նախագծին:

Հարց 2. Հաստատել ՀՀ կրթության տեսչական մարմնի 2021 թվականի ստուգումների տարեկան ծրագրում առաջարկվող լրացումը:

Կառավարման խորհրդի նախագահ՝ _____ **Վ. Դումանյան**

Ստորագրություն

Կառավարման խորհրդի քարտուղար՝ _____ **Ա. Գևորգյան**

Ստորագրություն